ՀՀ Հատուկ քննչական ծառայության պետ

Ա. Միրզոյանին

Դիմող՝ Նարեկ Ափինյան

Հասցե՝ Լանջային 24

Դիմում

Հարգելի պարոն Միրզոյան

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ 2012 թ. օգոստոսի 22-ին ժամը 17:30-18:00-ի սահմաններում Վանաձոր քաղաքի քիմ-գործարանի այգու մոտ, ինձ է հանդիպել Արամ Ղազարյանը 2012 թ. օգոստոսի 17-ին ոստիկանության Վանաձորի բաժնում իմ նկատմամբ խմբակային խոշտանգումներ և հոգեբանական ճնշումներ գործադրելու կապակցությամբ ինձնից ներողություն է խնդրել, հայտնելով որ զղջում է իրենց կատարած գործողությունների համար և խնդրել է, որ հետ վերցնեմ իր կողմից ներկայացված բողոքը:

Նույն օրը՝ սույն թվականի օգոստոսի 22-ին, երեկոյան ժամը 20:00-ի սահմաններում ինձ զանգահարել է Հատուկ քննչական ծառայության քննիչ Գորիկ Հովակիմյանը և կանչել է Լոռու մարզի դատախազություն: Քննիչի կանչով դատախազություն ներկայանալուց հետո քննիչի թելադրմամբ գրել եմ բացարտրություն, այն մասին որ բողոք չունեմ, և ոստիակությունում իմ նկատմամբ հոգեբանական և ֆիզիկական բռնություններ չեն իրականացվել:

Այժմ գիտակցում եմ, որ ՀՀ Հատուկ քննչական ծառայության քննիչի մոտ տվածս բացատրությունը, և հասկանում եմ, որ այն գրել եմ սույն թվականի օգոստոսի 17-ին իմ նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից հոգեբանական ճնշումների ազդեցության տակ:

Խնդրում եմ չեղյալ համարել 2012 թ. օգոստոսի 22-ին տված բացատրությունը և ընթացք տալ ներկայացված հաղորդմանը:

Դիմողներ՝ Ն. Ափինյան

Ա. Ափինյան

23.08.2012թ.